ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ԴԻՄՈՒՄ

Բարձրագույն դատական խորհրդի հարգարժան անդամներ,

Դատական օրենսգիրք՝ սահմանադրական օրենքի իրավադրույթների տարաբնույթ մեկնաբանության հնարավորություն ստեղծող ձևակերպումները, որոնց կիրառման արդյունքում ստեղծվել է իրավիճակ, որի արդյունքում կողմնակի դիտորդի մոտ և ընդհանրապես հանրության շրջանակներում ստեղծվել է իմ՝ որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամի, ընտրության օրինականության հարցում կասկած հարուցող ընկալում, ենթակա են փոփոխման և արդյունքում հստակեցման՝ պահպանելով օրենքի ոգին ու տրամաբանությունը:

Այդուհանդերձ, հիմք ընդունելով ստեղծված իրավիճակը, հաշվի առնելով ԲԴԽ-ի՝ որպես երկրի իրավական անվտանգությունն ապահովող սահմանադրական մարմնի դերակատարությունն ու Խորհրդի կողմից կայացվելիք որոշումների հեղինակությունը որևէ ողջամիտ կամ մտացածին ենթադրություններով ստվերելու անթույլատրելիությունը, կարևորելով Խորհրդում աշխատանքները համերաշխության ու վստահության մթնոլորտում իրականացնելու անհրաժեշտությունը, հրաժարական եմ տալիս՝ որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ և գտնում, որ իմ գործունեությունը շարունակելով որպես Վճռաբեկ դատարանի դատավոր էլ ավելի կբարձրացնեմ դատական իշխանության հեղինակությունն ու արդարադատության արդյունավետությունը:

Ուստի խնդրում եմ, «Հ2 դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն ընդունեք իմ հրաժարականը՝ որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամի և լիազորությունները դադարած համարել 2019 թվականի հուլիսի 22-ից:

Միաժամանակ խնդրում եմ Բարձրագույն դատական խորհրդի նիստում սույն հրաժականի դիմումը քննարկել իմ բացակայությամբ:

Հարգանքով՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամ

Նախշուն Տավարացյան

19.07.2019թ.